ՀՀ, ք. Երևան-0019, Բաղրամյան փ. 1/27
Էլ. փոստ՝ antifakeam@gmail.com
Հեռ.՝ (+374 91) 57-27-18

№ 0130-19 «03» դեկտեմբերի 2019 թ.

Լոռու մարզպետ Անդրեյ Ղուկասյանին
(Հասցե՝ ք. Վանաձոր 2001, Հայքի հրապարակ,
էլ. փոստ՝ lori@mta.gov.am,
Հեռ.՝ (0322) 4-61-92),

«Անտիֆեյք.ամ» կայքի գլխավոր խմբագիր
Աստղիկ Մաթևոսյանից

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն Ղուկասյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 51-րդ և 42-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տեղեկություններ տրամադրել հետևյալի մասին.

1. 2019թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին Լոռու մարզպետարանում ընդհանուր քանի՞ անգամ և որքա՞ն պարգևավճար է հատկացվել:
2. Մարզպետարանի աշխատակազմը (ներառյալ՝ մարզպետ, փոխմարզպետներ, տեղակալներ, օգնականներ և այլն) քանի՞ անգամ, ե՞րբ և որքա՞ն են պարգևատրվել (տրամադրել պաշտոնը, անուն, ազգանունը, պարգևատրումների քանակը, ժամանակահատվածը և պարգևավճարի չափը առանձին-առանձին):

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող

տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու սույն հարցումը ստանալուն պես իրազեկել այդ մասին, ինչպես նաև հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

(Պատրաստ եմ վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը):

Խնդրում եմ հարցման պատասխանն ուղարկել և՛ նշված էլեկտրոնային փոստի հասցեով, և՛ թղթային տարբերակով՝ նշված հասցեով:

Կանխավ շնորհակալ եմ՝

«Անտիֆեյք.ամ» կայքի գլխավոր խմբագիր՝ **Ա. Մաթևոսյան**

«03» սեպտեմբերի 2019 թ.